

5.6. Նոտարական գործունեությունը 2000թ. հունվար-սեպտեմբերին

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված վիճակագրական ամփոփ տեղեկատվության, 2000թ. հունվար-սեպտեմբերին համակարգում վավերացվել է 183428 գործ կամ 6.0%-ով ավել, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում, իսկ գանձված պետական տուրքը կազմել է 594.6 մլն. դրամ կամ նախորդ տարվա համեմատ 14.3%-ով պակաս: Մեկ գործարքի հաշվով գանձված պետական տուրքը կազմել է 3.2 հազ. դրամ:

Նոտարական գործունեության հիմնական ցուցանիշները

	Վավերացված գործերի քանակը		Գանձված պետական տուրքը, հազ. դրամ	
	ընդամենը	2000թ. հունվար-սեպտեմբերի աճը կամ նվազումը 1999թ. հունվար-սեպտեմբերի համեմատ, % (նվազումը «-» նշանով)	ընդամենը	2000թ. հունվար-սեպտեմբերի աճը կամ նվազումը 1999թ. հունվար-սեպտեմբերի համեմատ, % (նվազումը «-» նշանով)
Անշարժ գույքի օտարման պայմանագրի հաստատում	11058	- 6.5	100188.0	- 11.9
այդ թվում՝ բնակելի տների (բնակարանների)	8853	- 10.0	87791.0	- 9.2
կառույցների և այլ շինությունների	931	- 5.7	9510.0	3.8
հողամասերի՝ առանց կառույցի	1274	26.3	2887.0	- 63.6
Ավտոմեքենաների, մոտոցիկլետների և այլ ինքնագնաց մեքենաների ու մեխանիզմների օտարման պայմանագրի հաստատում	7497	- 22.7	71326.0	- 21.8
Գրավի մասին պայմանագրի հաստատում ու գրանցում	4429	- 15.2	37939.0	- 23.3
Կտակների հաստատում	1570	- 13.3	16066.0	- 13.9
Ժառանգության իրավունքի վկայագրերի հանձնում	5525	21.2	7532.0	- 31.4
Ավտոտրանսպորտի միջոցների տիրապետման, օգտագործման և տնօրինման լիազորագրերի հաստատում	22224	- 14.5	224762.0	- 13.0
Այլ լիազորագրերի հաստատում	9087	23.3	6265.0	3.3
Փաստաթղթերի թարգմանության իսկության վավերացում	17993	54.6	18051.0	47.4
Փաստաթղթերի պատճենների և դրանցից քաղվածքների իսկության վավերացում	33375	28.6	11303.0	18.9
Քաղաքացիների ստորագրությունների իսկության վավերացում	62864	5.0	31586.0	- 3.1
Այլ բնույթի փաստաթղթերի վավերացում	7806	- 14.6	69631.0	- 23.5
Ընդամենը	183428	6.0	594649.0	- 14.3

Նոտարական գործունեության ցուցանիշներն ըստ եռամսյակների

	I	II	III
Վավերացված գործերի քանակը	48601	63520	71307
Գանձված պետական տուրքը, մլն. դրամ	177.3	204.8	212.6